

սպասաւորելով նմա յամենայն զործս եւ ի բանս» :

Մեր ճանապարհորդը Երուսաղէմի մեծարեալ նուիրակին հետ բարեաւ կը ժամանէ հայրենիք. «եւ եկեալ ի տիրախնամ եւ աստուածապահ մայրաքաղաքն Լէվ կոչեցեալ... եկին ընդ առաջ մեր քահանայք եւ ժողովուրդք եւ մեծարանօք տարան իջուցին ի վանքն սուրբ Հաճկատար եւ մեծ հարկիս արարին Ղուկաս պարոնաէրին, որպէս Երուսաղէմայ նուիրակին» (էջ 336) :

Սիմէոն ուշադիր չէ եղած նշանակել մեզի Լվով հասնելու ժամանակը. որ պէտք է եղած ըլլայ 1618ի աշնան : Զատիկ գրիչ 1619 յունուար 4ին «ի վայելումն տէր Ղուկաս եպիսկոպոսի» կ'օրինակէր, հաւանօրէն ի Լով, Դաւիթ Անյաղթի գրութիւնները¹⁰ : Կամենիցի տարեգիրը¹¹ կ'արձանագրէ. «Թվ. ՌկԸ. Փետրվար ԻԳ. Խայնդուն (Դչ.). Տէր Ղուկաս պարոնաէր նըւիրակը Երուսաղէմնինկ օտքբալեօնըյ պօլուր Իլովտան տա քէլաի Քամէմէնէցքա ժողովք էղմա» : Ուրիշ յիշատակագրի մը համաձայն, որ նուիրակին համար Ներսէս Ծնորհալոյ Ընդհանրականն կ'օրինակէ, նոյն տարւոյն Մայիս 25ին, Ղուկաս Լվով կը գտնուէր. կ'ըսուի. «Քրեցաւ... ի խնդրոյ հեղահօղի գրասէր տէր Ղուկաս եպիսկոպոսին սուրբ Երուսաղէմայ...»

¹⁰ Համամճեան, Յուլյ. Գաղատիոյ, Թ. 83 :

¹¹ Կամենից, էջ 84 :